Արձանագրություն N 2

## «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

**Գնահատող հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝**

- Մ. Մկրտչյան

**Հանձնաժողովի բացող անդամներ՝**

- Հ. Մանուկյան
- Կ.Դավթյան

**Հանձնաժողովի գնահտող անդամներ՝**

- Ն. Սարգսյանց
- Ա. Սողոմոնյան

**Քարտուղար՝** Էլինա Պողոսյան

## <u>Օրակարգ</u>

1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը:
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:
3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.

### 1. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգին էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ներկայացված հայտերը

---

**(Է.Պողոսյան)**

1.1 «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ –ի կարիքների համար «դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

| Հ/հ | Մասնակիցների անվանումը |
|---|---|
| 1. | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ |
| 2. | «Արփիմեդ» ՍՊԸ |
| 3. | «Արֆարմացիա» ՓԲԸ |
| 4. | «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ |

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

### 1. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

---

**(Է.Պողոսյան)**

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. **Տե՛ս Հավելված N 1:**

| Չ/հ | Գնման առարկա | Նախահաշվային պլանավորված գումար | Մրցույթին մասնակցող կազմակերպությունների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հ/h | Անվանումները | Գնային առաջարկ/ՀՀ դրամ/ | | |
| | | | | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Ամօքսիցիլին քլավուլոնաթթու | - | 1 | «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ | 37 500 | 7 500 | 45 000 |
| 2 | Կլինդամիցին | - | 1 | «Արֆարմացիա» ՓԲԸ | 140 000 | 28 000 | 168 000 |
| | | | 2 | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ | 333 333,33 | 66 666,67 | 400 000 |
| | | | 3 | «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ | 816 666,67 | 163 333,33 | 980 000 |
| 3 | Պիրիմետամին | - | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 4 | Սուլֆադիազին | - | 1 | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 5 | Պրիմախին | - | 1 | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 6 | Սուլֆամեթօքսազոլ/Տրիմեթոպրիմ | - | 1 | «ԱԼՖԱ-ՖԱՐՄ ԻՄՊՈՐՏ» ՓԲԸ | 11 427 500 | 2 285 500 | 13 713 000 |
| | | | 2 | «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ | 20 708 333,33 | 4 141 666,67 | 24 850 000 |
| 7 | Սուլֆամեթօքսազոլ/Տրիմեթոպրիմ | - | 1 | «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ | 1 633 333,33 | 326 666,67 | 1 960 000 |
| 8 | Սուլֆամեթօքսազոլ/Տրիմեթոպրիմ | - | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 9 | Իտրակոնազոլ | - | 1 | «ԶԻԱՐԶԻ» ՍՊԸ | 9 399 000 | 1 879 800 | 11 278 800 |
| 10 | Վալգանցիկլովիր | - | | Գնային առաջարկի բացակայություն | | | |
| 11 | Լիպոսոմալ Ամֆոտերիցին | - | | Գնային առաջարկի բացակայություն | | | |

*«Արփիմեդ» ՄՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի ներառվել տվյալ աղյուսակում, քանի որ չի համապատասխանում ընթացակարգի հրավերի պահանջներին:*

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

**3. «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:**

**(Է.Պողոսյան)**

3.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **Armeps (www.armeps.am)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.***

- «Արփիմեդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերում, մասնավորապես՝ գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված 1-ում, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ Հավելված 1.1-ում, հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման մասին հայտարարությունում՝ Հավելված 1.2-ում և գնային առաջարկում՝ Հավելված 2-ում, սխալ են նշված գնման ընթացակարգի ծածկագրերը: «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-ԳԼ-21/31» ծածկագրի փոխարեն նշված է «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-21/31» և «ԻՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-ԴԵՂ-21/28»: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «Արփիմեդ» ՍՊԸ-ի հայտը՝ գնային առաջարկը ներկայացված էր հրավերի պահանջներին անհամապատասխան:
- «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությունում **հավելված 1-ում** իրական շահառուի տվյալների «անուն, ազգանուն և հայրանուն» դաշտում լրացված է «Ալֆա-Ֆարմ» ՓԲԸ, իսկ «ՀՀ քաղաքացիների համար՝ նույնականացման քարտի կամ

անձնագրի կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված անձը հաստատող փաստաթղթի տեսակը և համարը» դաշտում լրացված է պետ. ռեգիստրի տվյալները: Անհրաժեշտ է իրական շահառուների տվյալները լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվություններին համապատասխան, բացի այդ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ **հավելված 1.1-ում** 2-րդ և 6-րդ չափաբաժինների մասով ներկայացված տեխնիկական բնութագրերում բացակայում են հրավերով պահանջվող պիտանելիության ժամկետի մասին տեղեկատվությունը, մասնավորապես հրավերով պահանջվել է ***«պիտանելիության ժամկետի 2/3 առկայություն»:***

- «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ հավելված 1.1-ում արտադրողի անվանումը սյունակում լրացված է երկրների մասին տեղեկություն, մինչդեռ սույն ընթացակարգի հրավերով երկրների մասին տեղեկություն չի պահանջվել, ուստի անհրաժեշտ է արտադրողի անվանումը սյունակում լրացնել հրավերով պահանջվող տեղեկատվությունը:

**Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ին և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները, իսկ իսկ շտկված տարբերակն ուղարկել elinapoghosyan@yandex.com էլեկտրոնային հասցեին:**

Հանձնաժողովի քարտուղարը նույն օրը էլեկտրոնային եղանակով «Ալֆա-Ֆարմ Իմպորտ» ՓԲԸ-ին և «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ին ուղարկեց արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին ծանուցումները:

**4. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.**

---

**(Է.Պողոսյան)**

4.1 Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության ուսումնասիրությունը վերջացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:30-ին, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Արմենակյան 153 հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0*

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ ______________ Մ. Մկրտչյան

հանձնաժողովի անդամներ՝ ______________ Հ. Մանուկյան

______________ Ն. Սարգսյանց

______________ Կ. Դավթյան

______________ Ա. Սողոմոնյան

հանձնաժողովի քարտուղար՝ ______________ Է. Պողոսյան